ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

0010, Երևան, Վ. Սարգսյան 3/8, հեռ. 594000
Էլ. փոստ info@moj.am

29.03.2016թ. N 01/14/3420-16

Ձեր N ____________________

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏ
ՊԱՐՈՆ ՎԼԱԴԻՄԻՐ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գասպարյան

Ի պատասխան Ձեր 2016 թվականի մարտի 10-ի 24/529 գրության՝ կից ներկայացվում է «Ոստիկանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի լրամշակված նախագծի վերաբերյալ ՀՀ արդարադատության նախարարության պետական փորձագիտական եզրակացությունը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՐՓԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՄՈՒՏՔ ԹԻՎ 939
«30» 03 2016 թ.

Կատարող՝ Արտյոմ Մեսրոպյան
ՀՀ ԱՆ իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Հեռ. (010) 59-41-24

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՍՆԽԱՏԵՍԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆ
ՄՈՒՏՔ ԹԻՎ 1903
«30» 03 2016 թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Ոստիկանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի լրամշակված նախագծի վերաբերյալ

Նախագիծը չի համապատասխանում ՀՀ Սահմանադրության 34-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին, համաձայն որոնց՝ յուրաքանչյուր ոք ունի **իրեն վերաբերող տվյալների պաշտպանության իրավունք,** ինչպես նաև նույն հոդվածի 5-րդ մասի պահանջներին՝ համաձայն որոնց՝ անձնական տվյալների պաշտպանությանը վերաբերող մանրամասները սահմանվում են օրենքով:

Միևնույն ժամանակ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ անձնական տվյալների պաշտպանության հետ կապված հարաբերություններն արդեն իսկ կարգավորված են «Անձնական տվյալների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով /այսուհետ օրենք/, որի 1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «... օպերատիվ-հետախուզական գործունեության ընթացքում կամ դատավարություններում օգտագործվող անձնական տվյալների հետ կապված առանձնահատկությունները **կարգավորվում են այլ օրենքներով»,** իսկ նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ **«այլ օրենքներով կարող են սահմանվել անձնական տվյալներ մշակելու, հսկողություն իրականացնելու առանձնահատկություններ**: Այլ օրենքներով հսկողություն իրականացնող մարմին սահմանված լինելու դեպքում լիազոր մարմինն իր լիազորություններն իրականացնում է **սույն օրենքով սահմանված կարգով»:**

Նույն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ **անձնական տվյալների մշակում է** անկախ իրականացման ձևից և եղանակից (այդ թվում՝ ավտոմատացված, տեխնիկական ցանկացած միջոցներ կիրառելու կամ առանց դրանց) ցանկացած գործողություն կամ գործողությունների խումբ, որը կապված է անձնական տվյալները հավաքելու կամ ամրագրելու կամ մուտքագրելու կամ համակարգելու կամ կազմակերպելու կամ պահպանելու կամ օգտագործելու կամ

վերափոխելու կամ վերականգնելու կամ փոխանցելու կամ ուղղելու կամ ուղեփակելու կամ ոչնչացնելու կամ այլ գործողություններ կատարելու հետ, իսկ նույն կետի 13-րդ ենթակետի համաձայն՝ **կենսաչափական անձնական տվյալներ** են անձի ֆիզիկական, ֆիզիոլոգիական և կենսաբանական առանձնահատկությունները բնութագրող տեղեկությունները:

Օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝ «Անձնական տվյալներ մշակելը օրինական է, եթե տվյալները մշակվել են **օրենքի պահանջների պահպանմամբ**, և տվյալների սուբյեկտը տվել է իր համաձայնությունը, բացառությամբ սույն օրենքով կամ այլ օրենքներով ուղղակիորեն նախատեսված դեպքերի»: Իսկ օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝ «Կենսաչափական անձնական տվյալներ մշակվում են միայն տվյալների սուբյեկտի համաձայնությամբ, **բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, և եթե օրենքով հետապնդվող նպատակը հնարավոր է իրականացնել միայն այդ կենսաչափական տվյալները մշակելու միջոցով»:**

Այդ առումով անհրաժեշտ է նկատել, որ օրենքի իմաստով **ԴՆԹ բնութագրերն** իրենց բովանդակությամբ **կենսաչափական անձնական տվյալներ են համարվում** և այդ տվյալների հավաքագրումը, փոխանցումը փորձագիտական հիմնարկներից ոստիկանությանն ու դրանց հաշվառումը նույնպես օրենքի իմաստով **անձնական տվյալների մշակում է համարվում**: Իսկ նման պարագայում նախագծով՝ Հայաստանի Հանրապետության փորձագիտական հիմնարկների վրա իրենց կողմից դատագենետիկական փորձաքննությունների նպատակով անձանց կենսաբանական ծագման նմուշներից ստացված ԴՆԹ տվյալները Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը տրամադրելու պարտականություն դնելը հակասելու է օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին, համաձայն որոնց՝ **անձնական տվյալները մշակվում են օրինական և որոշակի նպատակներով և առանց տվյալների սուբյեկտի համաձայնության չեն կարող օգտագործվել այլ նպատակներով:**

Անհատական, այդ թվում՝ կենսաչափական տվյալների հավաքագրման, օգտագործման հետ կապված հարաբերությունների իրավական կարգավորման տեսանկյունից «Անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին»

Եվրոպայի խորհրդի 1981 թվականի կոնվենցիան վկայում է որոշակի չափանիշների կիրառման անհրաժեշտության մասին, մասնավորապես.

1) այդ տվյալները պետք է հավաքագրվեն և մշակվեն արդար և օրինական ճանապարհով,
2) պահպանվեն հատուկ և իրավաչափ նպատակների համար և չօգտագործվեն այդ նպատակներին չհամապատասխանող ձևով,
3) լինեն համարժեք, համապատասխան և համաչափ հավաքման համար հիմք ծառայած նպատակներին,
4) անվտանգության համապատասխան միջոցներ պետք է ձեռնարկվեն ավտոմատացված տվյալների բազաներում պահպանվող անհատական տվյալների պաշտպանության համար:

Կենսաչափական տվյալների հավաքագրման, մշակման և օգտագործման հետ կապված հարաբերությունների իրավակարգավորման սկզբունքների վերաբերյալ Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի 2011 թվականի թիվ 1797 բանաձևի շրջանակներում անդամ պետություններին կոչ է արվում.

1) ապահովել համաչափություն կենսաչափական տվյալների հետ գործողություններ կատարելիս,
2) սահմանափակել դրանց գնահատումը, մշակումը և պահպանումը միայն հստակ անհրաժեշտության դեպքերի համար, մասնավորապես, երբ հանրային անվտանգության կամ հանրային առողջության պահպանման կամ այլոց իրավունքների պաշտպանության շահը գերակայում է մարդու իրավունքներին հնարավոր միջամտության նկատմամբ **և եթե այլ, նվազ միջամտություն հանդիսացող միջոցի օգտագործումն անհնար է,**
3) ապահովել համապատասխան պահպանման համակարգեր՝ մասնավորապես նվազագույնի հասցնելով կենտրոնացված համակարգերում տվյալների պահպանումը, ինչպես նաև խուսափել պահպանման համակարգերում անվերաբերելի տվյալներ պահպանելու չարաշահումներից,

4) ապահովել, որպեսզի կենսաչափական տվյալներն օգտագործվեն միայն դրանց իրավաչափ հավաքման համար հիմք հանդիսացած նպատակի համար՝ կանխելով այդպիսի տվյալների չթույլատրված փոխանցումն ու հասանելիությունը:

Բացի դրանից անհրաժեշտ է հաշվի առնել նաև, որ՝

1) ԴՆԹ-ն «Անձնական տվյալների մշակման ընթացքում մասնավոր անձանց իրավունքների պաշտպանության մասին» Եվրոպական պառլամենտի եւ Եվրոպական միության Խորհրդի՝ 1995 թվականի հոկտեմբերի 24-ի 95/46/ԵՀ դիրեկտիվի 8-րդ հոդվածի իմաստով համարվում է զգայուն տվյալ, քանի որ ի թիվս այլնի պարունակում է տեղեկություն մարդու առողջության, ինչպես նաև ռասայական և էթնիկ ծագման վերաբերյալ: Այս համատեքստում դիրեկտիվի 8-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ «Անդամ պետությունները պետք է արգելեն ռասայական կամ էթնիկ ծագում, քաղաքական հայացքներ, կրոնական կամ փիլիսոփայական համոզմունքներ, արհեստակցական միության անդամություն վեր հանող անհատական տվյալների և անհատի առողջության կամ սեռական կյանքին վերաբերող տվյալների մշակումը», իսկ դիրեկտիվի նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Անդամ պետությունները կարող են, պատշաճ երաշխիքների վերաբերյալ դրույթի համաձայն, էական հանրային շահի պաշտպանության հիմքերով ազգային իրավունքով (...) սահմանել բացառություններ (...)»:

2) ԴՆԹ-ն հնարավորություն է տալիս մշակել տեղեկատվություն անձի առողջական վիճակի (հիվանդությունների հանդեպ հակվածության), ինչպես նաեւ էթնիկ ծագման վերաբերյալ, և այդ առումով ԴՆԹ հաշվառում իրականացնելը (ԴՆԹ բանկեր ստեղծելը) **ռիսկային է համարվում մարդու արժանապատվության եւ հիմանարար իրավունքների տեսանկյունից:** Այս ռիսկն ընդունվել է Եվրոպական միության Խորհրդի 2009/C 261/01 բանաձևում:

Վերոհիշյալ դիրքորոշումներն արտացոլված են նաև Եվրոպական միության անձնական տվյալների աշխատանքային խմբի (հոդված 29) 2012 թվականի ապրիլի 27-ի (Article 29 Data Protection Working Party) խորհրդատվական փաստաթղթում, որն, ի թիվս այլնի,

ներկայացնում է ԴՆԹ-ի մշակման դեպքում անձնական տվյալների պաշտպանության ռիսկերը, որոնք նույնպես անհրաժեշտ է հաշվի առնել:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր հերթին՝ մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների ապահովման տեսանկյունից անդրադառնալով կենսաչափական տվյալների բնույթի ու դրանց իրավական պաշտպանության հիմնախնդիրներին արձանագրել է, որ **«...ԴՆԹ-ի և բջիջների նմուշների պահպանումը մեծ ազդեցություն ունի անձի մասնավոր կյանքի վրա:»** (CASE OF S. AND MARPER v. THE UNITED KINGDOM, Applications nos. 30562/04, 4 of December 2008): Նշված գործի շրջանակներում դատարանը կարևորել է նաև՝ **«որ հանրային մարմինների կողմից անհատական տվյալների պահպանումն ինքնին պետք է համարել տվյալ անձի մասնավոր կյանքի վրա ուղղակի ազդեցություն ունեցող հանգամանք, անկախ դրանց հետագա օգտագործման հանգամանքից...»**:

Նկատի ունենալով նաև, որ քրեական գործերով իրավական օգնության միջազգային պայմանագրերի շրջանակում Հայաստանի Հանրապետությունը պարտավորվել է անձանց մասին որոշակի տեղեկություններ փոխանցել այլ պետությունների՝ անհրաժեշտ էր նախագծով լրացուցիչ կարգավորմամբ հիմնավորել ԴՆԹ բնութագրերի՝ որպես զգայուն անձնական տվյալի հնարավոր փոխանցումը այլ պետությունների կամ էլ արգելել այդպիսի փոխանցումն, ինչ նախագծով չի ներկայացվել:

Այսպիսով, վերոշարադրյալից բխում է, որ «Ոստիկանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով ԴՆԹ բնութագրերի հաշվառում նախատեսող կարգավորումներն ինքնին բավարար չեն անձի՝ անձնական տվյալի պաշտպանության իրավունքը չխախտելու համար: Անհրաժեշտ է նախագծով հստակ սահմանել անձի վերաբերող զգայուն տեղեկությունները ԴՆԹ բնութագրերի միջոցով ստանալու (մշակելու) արգելքը կամ հիմնավորել էական հանրային շահի առկայությունը, որով պայմանավորվում է անձի վերաբերյալ զգայուն տեղեկությունները ԴՆԹ բնութագրերի միջոցով ստանալու (մշակելու) անհրաժեշտությունն, ինչպես նաև սահմանել վերոնշյալ ռիսկային

տեղեկություններն այլ նպատակով օգտագործելու արգելքն ու այդ ռիսկերը բացառող դրույթներ:

Նախագծի 1-ին հոդվածի նախավերջին պարբերությամբ ամրագրված դրույթի հետ կապված, համաձայն որի՝ ԴՆԹ բնութագրերի փոխանցման, մշակման և հաշվառման էլեկտրոնային համակարգերը պետք է ունենան ՀՀ կառավարությամբ որոշված սահմանված բավարար պաշտպանվածության մակարդակ, անհրաժեշտ ենք համարում նշել, որ դեռևս ՀՀ կառավարությունը չի սահմանել բավարար պաշտպանության մակարդակ: Միաժամանակ տեղեկացնում ենք, որ «Տեղեկատվական համակարգերում անձնական տվյալները մշակելու անվտանգությունն ապահովելուն ներկայացվող պահանջները սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը գտնվում է մշակման փուլում, հետևաբար խնդրահարույց է նախագծով ԴՆԹ բնութագրերի մշակման էլեկտրոնային համակարգերի բավարար պաշտպանության մակարդակ ունենալը պայմանավորել միայն կառավարության որոշման ընդունմամբ, քանի որ ԴՆԹ բնութագրերի մշակման էլեկտրոնային համակարգերի պաշտպանվածության պահանջները պետք է համադրելի լինեն նաև միջազգային (օրինակ՝ ԻՍՈ) չափանիշներին:

Միաժամանակ հայտնում ենք, որ նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը նույնաբովանդակ եզրակացություն է ներկայացրել Հայաստանի Հանրապետության ոստիկանություն 2015 թվականի դեկտեմբերի 28-ի 01/14/16202-15 և 2016 թվականի փետրվարի 2-ի 01/14/939-16 գրություններով:

ՀՀ ԱՆ իրավական ակտերի
փորձաքննության գործակալության պետ՝ **Կ.ԽՏՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3

հեռ. (+ 374 10) 58 24 13
ֆաքս (+ 374 10) 52 68 44
էլ. փոստ minister@moh.am

30.05.16 N ԱՄ/11.2/5670-16

Ձեր N _____

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏ, ԳԵՆԵՐԱԼ-ԼԵՅՏԵՆԱՆՏ
ՊԱՐՈՆ ՎԼԱԴԻՄԻՐ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գասպարյան

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կողմից ուսումնասիրվել է 2016 թվականի մայիսի 12-ի թիվ 24/1130 գրությամբ ներկայացված «Ոստիկանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը և կից ներկայացվում է առողջապահության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունը:

Միևնույն ժամանակ Նախագծի վերաբերյալ ստորև ներկայացվում է հետևյալ առաջարկությունը.

1. Հիմք ընդունելով «INTERPOL DNA MONITORING EXPERT GROUP Best Practice Principles: Recommendations for the Establishment of a National DNA Database, Quality Management, Page Quality Management, Page 3»-ի Ինտերպոլի 2015 թ. հունվարի 1-ի հանձնարարականները, հայտնում եմ, որ ԴՆԹ նույնականացման քարտադարանում հաշվառվում են այն ԴՆԹ բնութագրերը, որոնք տրամադրվում են ISO 17025

«ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
ՄՏԻՑ ԹԻՎ 1760
«31» 05 2016 թ.

«ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ՓԱՍՏԱԹՂԹԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԱԺԻՆ
ՄՏԻՑ ԹԻՎ 3573
«31» 05 2016 թ.

հավատարմագրված փորձագիտական հիմնարկների կողմից: Հետևաբար, առաջարկում եմ 1-ին հոդվածով նախատեսված 6.2) կետի 3-րդ պարբերության մեջ «փորձագիտական հիմնարկները» բառերը փոխարինել «ISO 17025 հավատարմագրում ունեցող փորձագիտական հիմնարկները» բառերով:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ԱՐՄԵՆ ՄՈՒՐԱԴՅԱՆ

Կատարող՝ Նելլի Թովմասյան
Իրավաբանական վարչություն
Հեռ. 56-56-81

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2009 թվականի
սեպտեմբերի 23-ի N 1104-Ն որոշման պահանջներով

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Ոստիկանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման դեպքում

«Ոստիկանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումն առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ ԱՐՄԵՆ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

0010, ք.Երևան-10, Մ.Մկրտչյան 5.
Հեռ. 011-59-72-07. Ֆաքս 52-65-77
Էլ. փոստ: secretariat@mineconomy.am
Վեբ կայք: www.mineconomy.am

№ 01/10.5/4274-16
«31» 05 2016 թ

Ձեր № 24/1130
12.05.2016թ

ՀՀ ԿԱ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏ
ԳԵՆԵՐԱԼ-ԼԵՅՏԵՆԱՆՏ
ՊԱՐՈՆ ՎԼԱԴԻՄԻՐ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գասպարյան,

Կից տրամադրում ենք «Ոստիկանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության, ինչպես նաև մրցակցության բնագավառներում կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունները:

Առդիր՝ 2 էջ:

Հարգանքով՝

ԱՐԾՎԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
ՄՏԻՑ ԹԻՎ 1761
«31» 05 2016

Կատարող՝ Նանար Գրիգորյան
Գործարար միջավայրի բարելավման վարչություն
011-597-133

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆ
ՄՏԻՑ ԹԻՎ 3574
«31» 05 2016թ.

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Ոստիկանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Ոստիկանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով (այսուհետ՝ Նախագիծ) նախատեսվում է սահմանել՝ անձից կենսաբանական ծագման նմուշների հիման վրա ստացված ԴՆԹ բնութագրերի հաշվին ԴՆԹ նույնականացման քարտադարանների ստեղծման և գործարկման իրավական հիմքերը:

Նախագծով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ առանձին ապրանքային շուկայի հետ, ուստի և Նախագծի ընդունմամբ որևէ առանձին ապրանքային շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն լինել չի կարող:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ազդեցություն չհայտնաբերվելու* եզրակացություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

ԳԱՐԵԳԻՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ

???????? ???????'

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Ոստիկանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

Նախագծի՝ գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ Նախագծով *սահմանվում են անձից կենսաբանական ծագման նմուշների հիման վրա ստացված ԴՆԹ բնութագրերի հաշվին ԴՆԹ նույնականացման քարտադարանների ստեղծման և գործարկման իրավական հիմքերը* և Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա **ազդեցություն *չի նախատեսվում:***

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ՍԵՐԳԵՅ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ

«26» 05 2016 թ. N ԱԱՀՆ-2-3/4517-16

Ձեր 13.05.2016թ. N 24/1130

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏ
ՊԱՐՈՆ Վ. ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գասպարյան

Ձեզ եմ տրամադրում «Ոստիկանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունը:

Առդիր՝ 1 էջ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ **Ա. ԱՍԱՏՐՅԱՆ**

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
ՄՏԻՑ ԹԻՎ 1705
«26» 05 2016 թ.

Կատարող՝ վերլուծության և մոնիթորինգի վարչություն, հեռ՝ 56 30 75

0010, ք. Երևան, Կառավարական տուն 3 հեռ (374 10) 56 53 83, ֆաքս. (374 10) 52 08 30
http://www.mlsa.am info@mlsa.am

ՀՀ Ազգային ժողովի Գրասենյակ
Մտից թիվ 3468
«26» 05 2016 թ.

Եզրակացություն

«Ոստիկանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման

«Ոստիկանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1 հոդվածի և ՀՀ Կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի թիվ 18-Ն որոշման համաձայն:

Նախագծի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է սոցիալական պաշտպանության ոլորտի և դրա առանձին ենթաոլորտների իրավիճակի բնութագրիչների և դրանց ինդիկատորների հիման վրա:

Նախագիծը՝

ա) ռազմավարական կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **չեզոք ազդեցություն.**

բ) շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **չեզոք ազդեցություն:**

կատ. Գ. Կոշեցյան
վերլուծության և մոնիթորինգի վարչություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ
MINISTRY OF NATURE PROTECTION OF THE REPUBLIC OF ARMENIA
MINISTER
МИНИСТЕРСТВО ОХРАНЫ ПРИРОДЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
МИНИСТР

0010, ք. Երևան, Հանրապետության հր. Կառավարական 3-րդ տուն
3 Government Bldg, Republic Sq, Yerevan, 0010, Armenia
0010, Армения, г.Ереван, Дом правительства, здание N3
էլ.փոստ /E-mail/ эл.почта: min_ecology@mnp.am
Web page: www.mnp.am
☎ (374 11) 818 501
🖷 (374 11) 818 506

№ 1/05.3/10927
«24» «05» 2016 թ.

ՀՀ ոստիկանության պետ
գեներալ-լեյտենանտ
պարոն Վ. Գասպարյանին

Հարգելի պարոն Գասպարյան

Ի պատասխան Ձեր 12.05.2016թ. N 24/1130 գրության ներկայացնում եմ «Ոստիկանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի բնապահպանության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման մասին եզրակացությունը:

Առդիր՝ 1 թերթ:

Հարգանքով՝

Ա. Գրիգորյան

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ՀԱՍՑԵՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
ՄՏՀՀ ԹԻՎ 1686
«26» 05 2016

Գ.Մանուչարյան
011 818 542

ՀՀ Ոստիկանության Քարտուղարություն
Մտից Թիվ 3411
«25» 05 2016 թ.

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Ոստիկանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի բնապահպանության բնագավառում կարգավորման

1. «Ոստիկանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Օրենք) ընդունման արդյունքում շրջակա միջավայրի օբյեկտների՝ մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

2. Օրենքի նախագծի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

3. Օրենքի նախագիծը բնապահպանության ոլորտին չի առնչվում, այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չի հակասում:

Օրենքի կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ն Ա Խ Ա Ր Ա Ր

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Էլ. փոստ՝ minister@minfin.am

Հեռ.՝ (+374 60) 700 304, ֆաքս՝ (+374 60) 700 358
Վեբ կայք՝ www.minfin.am

07/82-5/14829-16 23.05.2016թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏ
ՊԱՐՈՆ ՎԼԱԴԻՄԻՐ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ

*Ձեր ա.թ. մայիսի 12-ի N 24/1130
գրության կապակցությամբ*

Հարգելի պարոն Գասպարյան

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը կից Ձեզ է ներկայացնում «Ոստիկանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի՝ բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունը:

Առդիր՝ 1 էջ:

Հարգանքով

Ժամանակավոր պաշտոնակատար ԱՏՈՄ ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ

1642
24 05 16

«ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ
ԱՏԻՆ թիվ 3382
«24» 05 2016 թ.

Կատ.. Հ. Համամճյան
Հեռ. (011) 800-244

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Ոստիկանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի՝ բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

Նախագծով առաջարկվում է «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքում կատարել լրացումներ՝ հնարավորություն ստեղծելով հաշվառել և վարել ԴՆԹ քարտադարաններ:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում ենք, որ օրենքի նախագծի ընդունումը ՀՀ պետական բյուջեի եկամուտների և ծախսերի վրա կունենա չեզոք ազդեցություն: